Գրիգորիս Եպիսկոպոսին երդմնեցնէ հաւատարիմ ծառայութեան համար. Ե. յանձնել նոյն Գեր. Մեսրոպ Եպիսկոպոսին որ հայ և ռուս լեզուաց և կօլլեգիական կարգի մի ընդունակ մարդու կարգէ քարտուղար և առաջարկէ փոխանորդին ու Հոգ. կառավարութեան անդամոց որ խորհրդակցութեամբ և կօլլեգիական կարգով ըստ հրահանգութեան Սինոդի և ըստ տրամադրութեան օրինաց վարեն գործերը. Գեր. Գրիգորիս Եպիսկոպոսի վարած մուտից և ծախուց հաշիւները պատրաստի դրամների հետ օրինաւոր ցուցակով ստանայ և անդամոց ու քարտուղարի ստորագրութեամբ յանձնէ Հոգ. կառավարութեան, և ցուցակի օրինակը ուղարկէ Սինոդին. պատուիրէ Գեր. Գրիգորիս Եպիսկոպոսին որ վիճակային և այլ արդիւնքները գիտութեամբ անդամոց կառավարութեան մէջ ստանայ և յանձնէ գանձապահին ի պահպանութիւն, և այդ պաշտօնի համար իսկոյն կարգէ անդամներից մէկին. Զ. Յանձնել նոյն Գեր. Մեսրոպ Եպիսկոպոսին որ Վիճակային արդիւնքից փոխանորդին ռոճիկ կարգէ տարին 700 րուբլի, քարտուղարին՝ 300 րուբլի, ստորոժին 70 ռ. դիւանական ծախուց համար 60 րուբլի, ընդ ամենայն 1130 րուբլի. և պատուիրէ չըվստահանալ նշանակածից աւելի ծախս անել, և պարտաւորէ որ աւելացած դրամները չորս ամիսը՝ միանգամ ուղարկեն Սինոդին, իսկ անակնունելի և կարեւոր ծախքերի համար Սինոդից միշտ լուծումն խնդրեն Է. որոշեց այս մասին տալ տեղեկութիւն Երեւանայ կոնսիստորիային և Արարատի միջոցաւ՝ բոլոր կոնսիստորիաներին ու Հոգ. կառավարութեանց: Առաջադրեց Կարսայ նոր բացուած Հոգ. կառավարութեան, վիճակային արդիւնքով ընդ փոյթ գնել մի զերցալ և մի պատկեր Թագաւոր Կայսեր.

—

15 Ապրիլի. Սինոդը որոշեց Մայր Աթոռոյս միաբան Արժ. Ներսէս Արեղային կարգել անդամ Վանական Կառավարութեան Մայր Աթոռոյս.

Ա Զ Դ.

Մխիթարական երեւոյթ է, որ ի տեղեաց տեղեաց հայ ժողովրդականք վկայելով իւրեանց քահանայից բարւոք գնացից և վարուց մասին, խնդրումեն Հոգ. Ծայրագոյն Իշխանութիւնից վարձատրութիւն. բարւոք կլինէր, որ այսպիսի վարձատրութիւնները խնդրէին նոքա իւրեանց վիճակաւոր Առաջնորդի միջոցաւ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ